արա՛ զաղօթս քո ըստ օրինաց քոց, զի մի օտարաձևութիւն քո առ մերով ծնրադրութեամբս զգացուսցէ այլոց զհայութիւն քո և կրեսցես զվնաս. և նորա հետևեալ խաբէական խրատուց նոցա և այնպէս շրջեալ ընդ ամենայն ճամին, ի դառնալն խնդրէ զխալփախն, զոր թագուցեալ ընկերացն պատասխանեն, թէ յետ միանգամ դաւանելոյ զճշմարիտ կրօնն առաջի այնչափ բազմութեանն, զիարդ կամիս յառաջին կուրութիւն քո դառնալ ևն. և զաղաղակ բարձեալ ի տեղւոջն թէ արք եղբարք ոչ տեսիք դուք արդեօք զերկրպագութիւնս սորա ի ճամիի անդ, և որդ աւասիկ կամի դառնալ անդրէն յառաջին կրօն իւր, և վկայս ժողովեալ ամբոխիւ ածեն յատեան վէզիրին, վկայելով թէ դարձաւ ամենայնիւ ի մահմէտականութիւն, և ի քննել վէզիրին և ի բացասել նորա, և ի պատմել զխաբէութիւնս նոցա զոր անագան ծանեաւ, յայնժամ և վէզիրն դառնայ և յորդորէ զնա խստմամբ մեծամեծ պարգևաց և իշխանութեանց և ի չառնուլ նորա յանձն, հանէ զնա ի բաց յերեսաց իւրոց, և կոչէ առաջի զվկայսն և քննէ զվկայութիւն նոցա. և յետ այլոց բանից հարցանէ ցնոսա. զինչ խոստմունս պարգևաց և իշխանութեանց արարիք դուք նմա որով յորդորեցաւ ի տաճկութիւն, պատասխանեն նոքա ոչինչ. յայնժամ ասէ ցնոսա, արդ գիտացի ստուգիւ զի սուտ վկայէք ամենեքին զառնէն. զի ես այնչափ պարգևօք և իշխանութեամբ ոչ կարացի համոզել զնա, և դուք զիարդ հաւանեցուցիք առանց իրիք ակնկալութեան, վասն որոյ ոչ կամիմ ես զաւուրս սրբութեան անպարտ արեամբ շաղախել, (զի էին աւուրք ռամազանի). այլ տարայք զդա առ խազէսքէրն կամ առ այլ ոք, և առեալ տանին զնա առ խազէսքէրն, և առեալ զիլամն նորա, տարեալ գլխատեն զնա, որ բազում հառաչանօք խնդրէր յաստուծոյ զնելումն տգիտութեան իւրոյ, որով հետևեցաւ զառաջինն խաբէական խրատուց տաճիկ բարեկամացն [1]:...

1766 մարտ 23 Նուաստ ծ[առայ]

[Կ. Պոլիս] Հ. Մե[սրոպ] Վ. Մխ[իթարեան]

ՄԾԸ.

Քահանայապետական կոնդակ մը ահա, որով ներողութիւններ շնորհուած են ժամանակին ի Պոլիս՝ յանուն Սուրբ Խաչի հաստատուած Հայ Կաթողիկէ Եղբայրութեան մը։

Կղեմէս ԺԴ. Քահանայապետ

Ցաւերժական յիշատակ։ Զի որպէս լու եղև մեզ՝ եթէ ի քաղաքին Կոստանդնուպօլիս կանոնական օրինօք կամք են հաստատել զեղբայրութիւն ինչ հոգևորական և բարեպաշտական, վասն արանց և կանանց ի քրիստոս հաւատացելոց հայկազուն ևեթ ազգին յանուն ամենասուրբ խաչի, և եթէ եղբայրութեանս եղբարք և քորք յօժարին մտադիր ի կիր առնուլ զբազմապիսի գործս բարեպաշտութեան և սիրոյ։ Մեք առ օրինօք առնուլ եղբայ-

1. Ի լրացումն այս վկայաբանութեան՝ կը քաղեմ Մելգոնեանի առ Հ. Մկրտ. Անանեանց գրած նամակէն (1766, մայիս 20) հետևեալ մասերը ևս. «Ի բամազանի տաճկաց ի վաքլավայ կիւնիւ, ոմն պատանի, ազգաւ հայ իբր 25 ամաց Խաչեր անուն կեսարացի, արուեստիւ սուտճի, զգաստ ուղղափառ և անուն հօրն տատուր հայ... գնացեալ է տեսանել այս սօֆիայ ճամին, մանաւանդ վասն արուեստին իւրոյ ևս իբր թէ պատկանեալ ինչ արուեստին իւրոյ տեսցէ։ Արդ ի մտանելն ի ներքս ըստ բանից այնց տաճկաց հանեալ է ի գլխոյն գխալբախն, և զգօտին իւր փաթութեալ ի գլուխ... զկնի տեսանելոյ [ևն.] Խաչերն խնդրէ զխալփախն իւր ի տաճկէն, որ պահեալ էր գխալբախն ընդ քղանցին։ Պատասխանի տան տաճիկքն, հաշա, դու տաճկացար։ Ասէ Խաչերն. թողէք զշախան, Ասեն, նասրլ շախայ. դու տաճկացար։ Ասէ Խաչերն. այդ է բարեկամութիւն ձեր. ոչ ապաքէն դուք ինձ այսպէս և այնպէս խօսեցայք. իսկ ընդէր այժմ զներհակն առնէք ևն»։